# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.06.2013թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-32/13 բողոքը քննող հանձնաժողով

ԳԲԽ-32/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից 24.05.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-32/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

**1. «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Մեծ Հիմք» ԱԿ-ն հայտնել է, որ 2013 թվականի մայիսի 10-ին մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգին:

«Մեծ Հիմք» ԱԿ-ն ստացել է «ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի վերաբերյալ էլեկտրոնային ծանուցում, որտեղ նշվել է, որ «Մեծ Հիմք» ԱԿ-ի հայտը մերժվել է, քանի որ ներկայացված ծավալաթերթում առկա չէ

վերադիր ծախսերի առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկություն, որը հստակ պահանջվել է հրավերով:

Բողոքաբերը հայտնել է, որ իրենց հայտը մերժվել է անհիմն հետևյալ հիմնավորումներով.

«ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի հրավերի 5-րդ հավելվածում՝ գնի առաջարկում նշված է, որ 5-րդ և 6-րդ սյունյակները նախատեսվել են հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թ. հունվարի 14-ի N 05-Ն հրամանով հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի» 3-րդ, 7-րդ, 10-րդ և 11-րդ կետերը, մինչդեռ նշված հրամանը ուժը կորցրել է և չի գործում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրական ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի համաձայն՝ մասնակցի գնային առաջարկը, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, ներկայացվում է ինքնարժեք (վաճառքի ինքնարժեք), շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Մեծ Հիմք» ԱԿ-ն գտնում է, որ «ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընկերության հայտը մերժելով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով սահմանված պահանջները:

Բացի այդ ընկերությունը հարկ է համարել նշել նաև, որ «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից պայմանագրի կատարման համար առաջարկված գնի հաշվարկը ներառել է «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, իսկ Հրավերի՝ գնի առաջարկը հավելվածի 5-րդ և 6-րդ սյունյակները չեն լրացվել մի պարզ պատճառով, քանի որ դրանց լրացման համար Պատվիրատուի մատնանշած ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թ. հունվարի 14-ի N 05-Ն հրամանը ուժը կորցրել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 16.06.2008թ. N 41-Ն հրամանով:

Հաշվի առնելով վերոգրյալը, «Մեծ Հիմք» ԱԿ-ն խնդրել է դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԲԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Մեծ Հիմք» ԱԿ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

**2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 30.05.2013թ. N 04/032-778 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 24.05.2013թ. «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.06.2013թ. ԴՎԱ/1619 գրությամբ «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԲԱՇՁԲ-10/6» ծածկագրով «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից ներկայացված գնի առաջարկը և նրա անբաժան մաս կազմող ծավալաթերթի հաշվարկը, պարզվել է, որ այն ենթակա է մերժման, քանի որ չի համապատասխանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թ. հունիսի 16-ի N 41-Ն հրամանով սահմանված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման» կարգին: Հաշվարկի նկատմամբ առաջադրվող պահանջները մրցույթին ներկայացված է եղել Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտի ծավալաթերթում և ներառված է եղել ընթացակարգի հրավերում, որը ենթակա է պարտադիր լրացման, ինչը «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից չի պահպանվել:

**3. ԳԲԽ-32/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից 24.05.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «Մեծ Հիմք» ԱԿ-ի հայտը մերժելու մասին «ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կառուցման, վերանորոգման և իրականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/6» ծածկագրով կազմակերպված բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ընդունած որոշումը:

**4. <u>ԳԲԽ-32/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-32/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.</u>**

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Մեծ Հիմք» ԱԿ-ի (այսուհետև՝ նաև բողոքաբեր ընկերություն) կողմից 24.05.2013թ. ներկայացված բողոքը, «ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 06.06.2013թ. N ԴՎԱ/1619 գրությունը և գրությանը կից փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

«Մեծ Հիմք» ԱԿ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ 23.05.2013թ. ստացել է Ընթացակարգի վերաբերյալ էլեկտրոնային ծանուցում, որտեղ նշված է եղել, որ «Մեծ Հիմք» ԱԿ-ի հայտը մերժվել է, քանի որ ներկայացված ծավալաթերթում առկա չէ վերադիր ծախսերի առկայության կամ բացակայության վերաբերյալ որևէ տեղեկություն, որը հստակ պահանջված է եղել Հրավերով:

Բողոքաբեր ընկերությունը հայտնել է նաև, որ «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից պայմանագրի կատարման համար առաջարկված գնի հաշվարկը ներառել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, իսկ Հրավերի՝ գնի առաջարկը հավելվածի 5-րդ և 6-րդ սյունակները չեն լրացվել մի պարզ պատճառով, քանի որ դրանց լրացման համար Պատվիրատուի մատնանշած ՀՀ քաղաքաշինության

նախարարի 2008թ. հունվարի 14-ի N 05-Ն հրամանն ուժը կորցրել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 16.06.2008թ. N 41-Ն հրամանով:

Պատվիրատուն Կենտրոնին ուղղված գրությամբ նշել է, որ ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԲԱՇՁԲ-10/6» ծածկագրով «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից ներկայացված գնի առաջարկը և նրա անբաժան մաս կազմող ծավալաթերթի հաշվարկը, պարզվել է, որ այն ենթակա է մերժման, քանի որ չի համապատասխանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թ. հունիսի 16-ի N 41-Ն հրամանով սահմանված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման» կարգին: Հաշվարկի նկատմամբ առաջադրվող պահանջները մրցույթին ներկայացված են եղել Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտի ծավալաթերթում և ներառված է եղել ընթացակարգի հրավերում, որը ենթակա է պարտադիր լրացման, ինչը «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից չի պահպանվել:

Հրավերի 1-ին մասի 4.2 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկ (Հավելված N 5), որին անհրաժեշտ է կցել սահմանված կարգով և լրացված ծավալաթերթ-նախահաշիվները:

Հրավերի N 5 հավելվածով սահմանվել է, որ գնի առաջարկի աղյուսակի 1-ին սյունակում պետք է նշել չափաբաժնի համարը, 2-րդ սյունակում՝ աշխատանքի անվանումը, 3-րդ սյունակում՝ ինքնարժեքը, 4-րդ սյունակում՝ շահույթը, 5-րդ սյունակում՝ ժամանակավոր ծախսերը (շինություններ), 6-րդ սյունակում՝ ձմեռային թանկացումները (կլիմայական պայմաններ), 7-րդ սյունակում՝ ԱԱՀ-ն, 8-րդ սյունակում՝ առաջարկվող գինն առանց ԱԱՀ-ի և 9-րդ սյունակում՝ առաջարկվող գինը տառերով և թվերով:

Նույն հավելվածում որպես ծանոթություն նշվել է հետևյալը.

- Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չէ՝ 7-րդ և 8-րդ աղյուսակները չեն լրացվում:
- 5-րդ և 6-րդ սյունակները նախատեսվել են հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թ. հունվարի 14-ի N 05-Ն հրամանով հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի» 3-րդ, 7-րդ, 10-րդ և 11-րդ կետերը:
- Կից ներկայացվում է սահմանված կարգով լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով բողոքաբեր ընկերության կողմից ներկայացված գնի առաջարկի աղյուսակի.

• 1-ին տողի 1-ին՝ չափաբաժնի համարը սյունակում նշվել է 2, 2-րդ՝ աշխատանքների անվանումը սյունակում՝ ՀՀ Սյունիքի մարզ, Կարմրաքարի զորամասի բազմաբնակարան բնակելի սպայական շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ, 3-րդ՝ ինքնարժեքը սյունակում՝ 13550100, 4-րդ՝ շահույթը սյունակում՝ 1355010, 5-րդ՝ ժամանակավոր ծախսերը (շինություններ) սյունակում՝ 0 (ներառված է գնում), 6-րդ՝ ձմեռային թանկացումները (կլիմայական պայմաններ) սյունակում՝ 0 (ներառված է գնում), 7-րդ՝ ԱԱՀ-ի գումարը սյունակում՝ 2981022, 8-րդ՝ առաջարկվող գինն առանց ԱԱՀ-ի սյունակում՝ 14905110 և 9-րդ՝ առաջարկվող գինը տառերով և թվերով սյունակում՝ 17886132 տասնյոթ միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար մեկ հարյուր երեսուներկու:

• 2-րդ տողի 1-ին՝ չափաբաժնի համարը սյունակում նշվել է 3, 2-րդ՝ աշխատանքների անվանումը սյունակում՝ Թիվ 79512 զ/մ Պռոշյան հակահրդեհային ջրագծի կառուցում, պոմպակայանի վերանորոգում և հակահրդեհային ջրամբարի տեղափոխում, 3-րդ՝ ինքնարժեքը սյունակում՝ 10536210, 4-րդ՝ շահույթը սյունակում՝ 1053621, 5-րդ՝ ժամանակավոր ծախսերը (շինություններ) սյունակում՝ 0 (ներառված է գնում), 6-րդ՝ ձմեռային թանկացումները (կլիմայական պայմաններ) սյունակում՝ 0 (ներառված է գնում), 7-րդ՝ ԱԱՀ-ի գումարը սյունակում՝ 2317966, 8-րդ՝ առաջարկվող գինն առանց ԱԱՀ-ի սյունակում՝ 11589831 և 9-րդ՝ առաջարկվող գինը տառերով և թվերով սյունակում՝ 13907797 տասներեք միլիոն ինը հարյուր յոթ հազար յոթ հարյուր իննսունյոթ:

ՀՀ կառավարության 29.12.2011թ. «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» N 1916-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի դրույթները՝ հաշվի առնելով նույն որոշման 1-ին կետով հաստատված կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 48-րդ կետի համաձայն՝ մասնակցի գնային առաջարկը, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, ներկայացվում է ինքնարժեք (վաճառքի ինքնարժեք), շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Գտնում ենք, որ «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից Ընթացակագին մասնակցելու նպատակով ներկայացված գնի առաջարկը համապատասխանում է Կարգի 48-րդ կետով սահմանված պահանջներին:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կոմից Բողոքաբեր ընկերության հայտը մերժելու նպատակով ներկայացված պատճառաբանությանը, ապա այն հիմնավոր չէ, քանի որ Կարգի 48-րդ կետով հստակ սահմանված է, որ մասնակցի գնային առաջարկը, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, ներկայացվում է բացառապես ինքնարժեք, շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով և ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Այսինքն, Պատվիրատուի կողմից Հրավերի N 5 հավելվածում՝ գնի առաջարկի 5-րդ և 6-րդ սյունակներով պահանջվող՝ համապատասխանաբար ժամանակավոր ծախսերի (շինություններ) և ձմեռային թանկացումների (կլիմայական պայմաններ) վերաբերյալ, ինչպես նաև նույն հավելվածի ծանոթությամբ պահանջվող ծավալաթերթ-նախահաշիվը սահմանված կարգով լրացնելու և ներկայացնելու վերաբերյալ պահանջները չեն բխում Կարգի 48-րդ կետի պահանջներից:

Կենտրոնին ներկայացված գրությամբ թեև Պատվիրատուն հայտնել է, որ բողոքաբեր ընկերության հայտը մերժելու հիմք է հանդիսացել այն, որ վերջինիս կողմից ներկայացված գնի առաջարկը և նրա անբաժան մաս կազմող ծավալաթերթի հաշվարկը չի համապատասխանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թ. հունիսի 16-ի N 41-Ն հրամանով սահմանված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման» կարգին, սակայն Հրավերի N 5 հավելվածի ծանոթության մեջ Պատվիրատուն հղում է կատարել ոչ թե ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թ. հունիսի 16-ի N 41-Ն հրամանին, այլ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008թ. հունվարի 14-ի N 05-Ն հրամանին, որը Ընթացակարգը հայտարարելու պահին ուժը կորցրած է եղել:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսինքն, Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 48-րդ կետով սահմանված պահանջները:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից 24.05.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը բավարարել:

2. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԲԱՇՁԲ-10/6» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Մեծ Հիմք» ԱԿ-ի հայտը մերժելու որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գայանե Գասպարյան

Անդամներ՝ Աննա Մխիթարյան

Հովհաննես Սերայդարյան